Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-1010-17.02.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «աջակցություն,» բառից հետո լրացնել «սույն օրենքով նախատեսված դեպքերում ենթարկվելու բժշկական զննության, որին կարող է ներկա գտնվել նաև իր ընտրած բժիշկը,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձերբակալված կամ կալանավորված անձը ենթարկվում է բժշկական զննության՝

1) ձերբակալվածներին պահելու վայր կամ կալանավորվածներին պահելու վայր ընդունվելիս.

2) ձերբակալված կամ կալանավորված անձի՝ առողջական վիճակի վերաբերյալ գանգատի դեպքում.

3) ձերբակալված կամ կալանավորված անձի, իսկ նրա համաձայնության դեպքում՝ նրա պաշտպանի պահանջով.

4) ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում:».

2) 5-րդ մասից հետո լրացնել նոր մասեր՝ հետևյալ խմբագրությամբ.

«Բժշկական զննությանը կարող է ներկա գտնվել նաև ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը կարող է ներկա գտնվել բժշկական զննությանը, եթե՝

1) ձերբակալվածներին պահելու վայր է ներկայացել ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր բերելու պահից 3 ժամվա ընթացքում.

2) կալանավորվածներին պահելու վայր է ներկայացել կալանավորված անձին կարանտինային բաժանմունք տեղափոխելու պահից 24 ժամվա ընթացքում:

Բժշկական զննությունն իրականացվում է՝

1) ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսելիության, և եթե բժշկական զննությունն իրականացնող բժիշկն իր կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու նպատակով հակառակը չի պահանջում, ապա նաև՝ տեսանելիության սահմաններից դուրս.

2) անհատական սկզբունքով՝ առանձին:

Բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝

1) ձերբակալված անձի դեպքում՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում և անձնական գործում.

2) կալանավորված անձի դեպքում՝ էլեկտրոնային առողջապահության համակարգում:

Բժշկական զննության ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձը իրազեկվում է բժշկական զննության արդյունքների մասին:

Սույն օրենքի 21.1-ին հոդվածով նախատեսված դեպքում բժշկական զննության արդյունքները գրանցվում են նաև խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության մեջ: Բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և դրա լրացման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

Մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում, եթե առկա չեն սույն օրենքի 21.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը, ձերբակալված կամ կալանավորված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը բժշկական զննության արդյունքների մասին 24 ժամվա ընթացքում, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, իրազեկում է իրավասու քննչական մարմնին և դատախազությանը:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրումը

1. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմվում է, եթե՝

1) առկա է ձերբակալված կամ կալանավորված անձի գրավոր կամ բանավոր հայտարարությունը՝ մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման հետևանք լինելու վերաբերյալ.

2) բուժաշխատողը հայտնաբերում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը կարող է լինել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետևանք.

3) ձերբակալվածների պահման վայրի կամ կալանավորվածների պահման վայրի վարչակազմի ծառայողը բուժաշխատողին հայտնում է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթադրյալ դեպքի մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բժշկական զննության արձանագրությունը ստորագրվում է բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողի և բժշկական զննության ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձի կողմից: Եթե բժշկական զննությանը ներկա է գտնվել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը, ապա արձանագրությունը ստորագրվում է նաև նրա կողմից: Ձերբակալված կամ կալանավորված անձի կամ բժշկական զննությանը ներկա գտնված՝ նրա ընտրած բժշկի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ նշվում է այդ փաստը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է՝

1) արձանագրության պատճենն արձանագրությունը կազմելուց հետո անհապաղ տրամադրել ձերբակալված կամ կալանավորված անձին.

2) ձերբակալված կամ կալանավորված անձին տեղեկացնել իր միջոցների հաշվին մասնագիտական երկրորդ կամ իր նախընտրած թվով այլ կարծիք ստանալու իր իրավունքի մասին.

3) անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում արձանագրությունը կազմելու, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձի ինքնության վերաբերյալ հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով իրազեկել ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջոցները ձեռնարկելու համար:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում՝

1) կալանավորված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, արձանագրությունն ուղարկել իրավասու քննչական մարմին, իսկ արձանագրության պատճենը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով՝ դատախազություն.

2) ձերբակալված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է անհապաղ, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, արձանագրությունը տրամադրել շտապ բժշկական օգնության ծառայության կայանի օպերատիվ աշխատանքները կազմակերպող տվյալ օրվա պատասխանատուին, որը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում արձանագրությունը և շտապ բժշկական օգնության կանչի թերթիկը, հնարավորության

դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, ուղարկել իրավասու քննչական մարմին, իսկ դրանց պատճենները, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով՝ դատախազություն:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զննության արձանագրության վերաբերյալ իրազեկման հիման վրա ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ՝ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձի շփումը ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի՝ խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ բացառելու նպատակով:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Կալանավորված անձը ենթարկվում է բժշկական զննության կարանտինային բաժանմունք տեղավորվելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«Ձերբակալված անձը ձերբակալվածներին պահելու վայր բերվելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում ենթարկվում է բժշկական զննության հրավիրված շտապ բժշկական օգնության ծառայության բուժաշխատողի կողմից:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» օրենքի 21.1-ին հոդվածում լրացվող 8-րդ մասն ուժի մեջ է մտնում բժշկական զննության արդյունքների գրանցման համար նախատեսված էլեկտրոնային գործիքների ներդրման պահից: Մինչ այդ բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝

1) ձերբակալված անձի դեպքում՝ դրա համար նախատեսված գրանցամատյանում և անձնական գործում.

2) կալանավորված անձի դեպքում՝ նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանվորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում:

3. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում:

Կ-1010-17.02.2025-ՊԱ-011/1

~~Առաջին ընթերցում~~
Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «աջակցություն,» բառից հետո լրացնել «սույն օրենքով նախատեսված դեպքերում ենթարկվելու բժշկական զննության, որին կարող է ներկա գտնվել նաև իր ընտրած բժիշկը,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ձերբակալված կամ կալանավորված անձը ենթարկվում է բժշկական զննության՝

1) ձերբակալվածներին պահելու վայր կամ կալանավորվածներին պահելու վայր ընդունվելիս.

2) ձերբակալված կամ կալանավորված անձի՝ առողջական վիճակի վերաբերյալ գանգատի դեպքում.

3) ձերբակալված կամ կալանավորված անձի, իսկ նրա համաձայնության դեպքում՝ նրա պաշտպանի պահանջով.

4) ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում:».

2) 5-րդ մասից հետո լրացնել նոր մասեր՝ հետևյալ խմբագրությամբ.

«Բժշկական զննությանը կարող է ներկա գտնվել նաև ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը կարող է ներկա գտնվել բժշկական զննությանը, եթե՝

1) ձերբակալվածներին պահելու վայր է ներկայացել ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր բերելու պահից 3 ժամվա ընթացքում.

2) կալանավորվածներին պահելու վայր է ներկայացել կալանավորված անձին կարանտինային բաժանմունք տեղափոխելու պահից 24 ժամվա ընթացքում:

Բժշկական զննությունն իրականացվում է՝

1) ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսելիության, և եթե բժշկական զննությունն իրականացնող բժիշկն իր կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու նպատակով հակառակը չի պահանջում, ապա նաև՝ տեսանելիության սահմաններից դուրս.

2) անհատական սկզբունքով՝ առանձին:

Բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝

1) ձերբակալված անձի դեպքում՝ ~~դրա համար նախատեսված գրանցամատյանում~~ էլեկտրոնային առողջապահության համակարգում և անձնական գործում.

2) կալանավորված անձի դեպքում՝ ~~նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանավորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում~~ էլեկտրոնային առողջապահության համակարգում:

Բժշկական զննության ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձը իրազեկվում է բժշկական զննության արդյունքների մասին:

Սույն օրենքի 21.1-ին հոդվածով նախատեսված դեպքում բժշկական զննության արդյունքները գրանցվում են նաև խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության մեջ ~~ձևաթղթում~~: Բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և դրա լրացման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

Մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում, եթե առկա չեն սույն օրենքի 21.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը, ձերբակալված կամ կալանավորված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը բժշկական զննության արդյունքների մասին 24 ժամվա ընթացքում, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, իրազեկում է իրավասու քննչական մարմնին և դատախազությանը:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրումը

1. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմվում է, եթե՝

1) առկա է ձերբակալված կամ կալանավորված անձի գրավոր կամ բանավոր հայտարարությունը՝ մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման հետևանք լինելու վերաբերյալ.

2) բուժաշխատողը հայտնաբերում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը կարող է լինել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետևանք.

3) ձերբակալվածների պահման վայրի կամ կալանավորվածների պահման վայրի վարչակազմի ծառայողը բուժաշխատողին հայտնում է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթադրյալ դեպքի մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բժշկական զննության արձանագրությունը ստորագրվում է բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողի և բժշկական զննության ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձի կողմից: Եթե բժշկական զննությանը ներկա է գտնվել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը, ապա արձանագրությունը ստորագրվում է նաև նրա կողմից: Ձերբակալված կամ կալանավորված անձի կամ բժշկական զննությանը ներկա գտնված՝ նրա ընտրած բժշկի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ նշվում է այդ փաստը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է՝

1) արձանագրության պատճենն արձանագրությունը կազմելուց հետո անհապաղ տրամադրել ձերբակալված կամ կալանավորված անձին.

2) ձերբակալված կամ կալանավորված անձին տեղեկացնել իր միջոցների հաշվին մասնագիտական երկրորդ կամ իր նախընտրած թվով այլ կարծիք ստանալու իր իրավունքի մասին.

3) անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում արձանագրությունը կազմելու, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձի ինքնության վերաբերյալ հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով իրազեկել ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջոցները ձեռնարկելու համար:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում՝

1) կալանավորված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, արձանագրությունն ուղարկել իրավասու քննչական մարմին, իսկ արձանագրության պատճենը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով՝ դատախազություն.

2) ձերբակալված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է անհապաղ, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, արձանագրությունը տրամադրել շտապ բժշկական օգնության ծառայության կայանի օպերատիվ աշխատանքները կազմակերպող

տվյալ օրվա պատասխանատուին, որը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում արձանագրությունը և շտապ բժշկական օգնության կանչի թերթիկը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, ուղարկել իրավասու քննչական մարմին, իսկ դրանց պատճենները, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով՝ դատախազություն:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զննության արձանագրության վերաբերյալ հրազեկման հիման վրա ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ՝ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձի շփումը ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի՝ խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ բացառելու նպատակով:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Կալանավորված անձը ենթարկվում է բժշկական զննության կարանտինային բաժանմունք տեղավորվելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«Ձերբակալված անձը ձերբակալվածներին պահելու վայր բերվելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում ենթարկվում է բժշկական զննության հրավիրված շտապ բժշկական օգնության ծառայության բուժաշխատողի կողմից:»:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» օրենքի 21.1-ին հոդվածում լրացվող 8-րդ մասն ուժի մեջ է մտնում բժշկական զննության արդյունքների գրանցման համար նախատեսված էլեկտրոնային գործիքների ներդրման պահից: Մինչ այդ բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝

1) ձերբակալված անձի դեպքում՝ դրա համար նախատեսված գրանցամատյանում և անձնական գործում.

2) կալանավորված անձի դեպքում՝ նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանվորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում:

3 ~~2~~. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1010-17.02.2025-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արսեն Թորոսյան**	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 21-րդ հոդվածում լրացվող 8-րդ մասի 1-ին և 2-րդ կետեր	Հաշվի առնելով, որ էլեկտրոնային գրանցման համակարգերը լայնորեն կիրառվում են զարգացած երկրներում, առաջարկում ենք բժշկական զննության արդյունքների գրանցումն իրականացնել էլեկտրոնային համակարգի միջոցով, որտեղ բժշկական զննության արդյունքները կգրանցվեն մեկ անգամ և ինքնաշխատ կերպով կկապվեն անձի գրանցամատյանի կամ ամբուլատոր քարտի հետ, ինչը կնվազեցնի սխալների և անհամապատասխանությունների ռիսկը, կխնայի ժամանակը, կապահովի տվյալների գաղտնիությունը՝ մուտքի սահմանափակման միջոցով, կբարձրացնի համակարգի թափանցիկությունը և կօգնի՝ կանխել խախտումները, ինչը համահունչ է օրենքի նպատակին՝ պաշտպանելու ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները: Ըստ այդմ, Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 21-րդ հոդվածում լրացվող 8-րդ մասի 1-ին կետում «դրա համար նախատեսված գրանցամատյանում» բառերը առաջարկում ենք փոխարինել «էլեկտրոնային առողջապահության համակարգում» բառերով,	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			իսկ 2-րդ կետում «նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանավորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում» բառերը փոխարինել «էլեկտրոնային առողջապահության համակարգում» բառերով:		
2.	**Կառավարություն**	3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 21-րդ հոդվածում լրացվող 10-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 21-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասում և Նախագծի 4-րդ հոդվածով նշված օրենքում լրացվող 21.1-ին հոդվածում առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ, և «խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրություն» հասկացությունը կիրառելիս օգտագործել միևնույն բառերը: Հաշվի առնելով վերոգրյալը 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 21-րդ հոդվածում լրացվող 10-րդ մասում «ձևաթղթում» բառի փոխարեն լրացնել «մեջ» բառը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
3.	**Կառավարություն**	4-րդ հոդվածով լրացվող 21.1-ին հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 21.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զննության արձանագրության հիման վրա ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			անձը ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ՝ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձի շփումը ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի՝ խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ բացառելու նպատակով: Իսկ նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 21.1-ին հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը նախատեսում է բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողի կողմից ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին արձանագրությունը կազմելու, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձի ինքնության վերաբերյալ հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով իրազեկելու վերաբերյալ կարգավորում: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ բժշկական զննության արձանագրությունը պարունակում է զննության ենթարկված անձի առողջական վիճակի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, որոնց տրամադրումը ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին անհրաժեշտ և պիտանի չէ՝ վերջիններիս կողմից անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու համար:		

			Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 21.1-ին հոդվածի 5-րդ մասում «արձանագրության» բառից հետո լրացնել «վերաբերյալ իրազեկման» բառերը:		
4.	**Կառավարություն**	6-րդ հոդված	Հաշվի առնելով, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բժշկական օգնությունը տրամադրվում է ավագ և միջին, իսկ ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ բացառապես միջին բուժաշխատողների կողմից, և մարմնական զննությունը իրականացնում են նաև միջին բուժաշխատողները, որոնք, սակայն, հասանելիություն չունեն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին, առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» օրենքի 21.1-ին հոդվածում լրացվող 8-րդ մասն ուժի մեջ մտնելու ժամկետը համապատասխանեցնել Եվրոպական խորհրդի աջակցությամբ մշակվող բժշկական զննության արդյունքների գրանցման համար նախատեսված էլեկտրոնային գործիքների ներդրման հետ, որն իր մեջ ներառելու է միջին բուժանձնակազմի կողմից լրացվող փաստաթղթերը հետագայում ավագ բուժաշխատողի կողմից էլեկտրոնային համակարգ ներբեռնելու հնարավորություն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 1. 6-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է, լրացվել է նաև նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 6.	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: 2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» օրենքի 21.1-ին հոդվածում լրացվող 8-րդ մասն ուժի մեջ է մտնում բժշկական զննության արդյունքների գրանցման համար նախատեսված էլեկտրոնային գործիքների ներդրման պահից: Մինչ այդ բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝ 1) ձերբակալված անձի դեպքում՝ դրա համար նախատեսված գրանցամատյանում և անձնական գործում. 2) կալանավորված անձի դեպքում՝ նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանվորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում:»: 2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ (լրամշակված) 3-րդ մասում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ իրավական» բառերը:		